



**«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ**

# **2020թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների  
նախարարության և «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի  
միջև 23.03.2019թ.-ի կնքված՝ «Ավտոմոբիլային ճանապարհների  
ցանցի հսկողություն՝ ուսումնասիրություններ և  
փորձաքննություններ» ծրագրի No 1 պայմանագրի կատարման**



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»



Տ. ՆԱՂԴԱԼՅԱՆ

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար  
14 ապրիլի 2020թ.

«Ավրոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն» ուսումնասիրություններ և փորձաքննություններ» ծրագրի պայմանագրի շրջանակներում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ուժերով 2020թ. առաջին եռամսյակում իրականացվել են հետևյալ աշխատանքները, ըստ ներքոհիշյալ ենթածրագրերի՝

1. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....5

1.1 Ավրոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալների հավաքագրում.....6

1.2 Երթևեկության ինտենսիվության չափումներ և վերլուծություն .....6

1.3 Աջակցություն պետական նշանակության ավրոմոբիլային ճանապարհների վերականգնման ծրագրերի մշակմանը ..... 13

1.4 Ավրոմոբիլային ճանապարհների գույքագրում, տվյալների շտեմարանի լրացում և վարում .....14

1.5 Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում.....14

2. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ..... 16

2.1 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով միջպետական և հանրապետական նշանակության ավրոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Ավրոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով.....17

2.2 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով ավրոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով..... 19

2.3 Ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների մշտադիտարկում, հսկողություն և գնահատում.....	21
3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ /ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ, ԳՆՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ/ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	22
4. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈՔԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ/ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.....	23

1. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ  
ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ  
ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## **1.1 Ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալների հավաքագրում**

Հաշվետու եռամսյակում իրականացվել են նախապատրաստական և պլանավորման աշխատանքներ, ինչպես նաև սարքավորումների կարգաբերում:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

## **1.2 Երթևեկության ինտենսիվության չափումներ և վերլուծություն**

Հայաստանի Հանրապետության որոշ ավտոմոբիլային ճանապարհներին տեղակայված են տրանսպորտային միջոցների ինտենսիվությունը չափող առցանց աշխատող «SIEMENS» մակնիշի հաշվիչներ:

Հաշվիչները տեղակայված են հետևյալ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա.

Կետ N°1 Մ-2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման ա/ճ-ի կմ 298+000 («Կապանի ՃՇՇ»-ի մոտ) – 1 հաշվիչ

Կետ N°2 Մ-2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման ա/ճ-ի կմ 367+250 («Մեղրու ՃՇՇ»-ի ա/բ գործարանի մոտ) – 1 հաշվիչ

Կետ N°3 Մ-3 Թուրքիայի սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր – Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 126+000 («Լոռու ՃՇՇ»-ի մոտ) – 1 հաշվիչ

Կետ N°4 Մ-3 Թուրքիայի սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր – Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 135+160 (Պուշկինի թունելի մոտ) – 1 հաշվիչ

Կետ N°5 Մ-4 Երևան – Սևան – Իջևան – Ադրբեջանի սահման ա/ճ կմ 80+000 (Դիլիջանի թունելի մոտ) – 1 հաշվիչ:

Սրացված ինտենսիվության տվյալները հանդիսանում են HDM-4 տնտեսագիտական վերլուծության ծրագրի մուտքային տվյալ (AADT – միջին օրական ինտենսիվությունը տարվա կտրվածքով):


Հաշվետրու եռամսյակում կատարվել են մշտական տեղակայված հաշվիչների կարգաբերման աշխատանքներ և տրանսպորտային միջոցների ինտենսիվությունը չափող հաշվիչների տվյալների հավաքագրում:

Հաշվետրու ժամանակաշրջանում տեղակայված առցանց աշխատող հաշվիչների տվյալների միջին օրական ինտենսիվությունը հետևյալն է.

1. Մ-2 Երևան – Երասխ – Գորիս - Մեղրի - Իրանի Իսլամական

Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 298+000 («Կապանի ՃՇՇ»-ի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար 1	բեռնատար 2	բեռնատար կցորդով 3
Ընդամենը	3272	3016	185	71




2. Մ-2 Երևան – Երասխ – Գորիս - Մեղրի - Իրանի Իսլամական

Հանրապետության սահման ա/ճ-ի 367+250 («Մեղրու ՃՇՇ»-ի ա/բ


գործարանի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար 1	բեռնատար 2	բեռնատար կցորդով 3
Ընդամենը	789	614	108	67



3. Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր –  
Տաշիր - Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 126+000 («Լոռու ՃՇՇ»-ի մոտ)


Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար 1	բեռնատար 2	բեռնատար կցորդով 3
Ընդամենը	4316	4107	125	84






4. Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր –  
Տաշիր - Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 135+160 (Պուշկինի թունելի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդավար 1	բեռնավար 2	Բեռնավար կցորդով 3
Ընդամենը	1375	1306	47	22




5. Մ-4 Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի Հանրապետության սահման ա/ճ-ի  
կմ 80+000 (Դիլիջանի թունելի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման(ավտոմոբիլ)		
		թեթև մարդավար 1	բեռնավար 2	բեռնավար կցորդով 3
Ընդամենը	3276	3055	143	78




Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված չափումների հիման վրա կազմվել է տրանսպորտային միջոցների հոսքի միջին օրական ինտենսիվության համեմատություն՝ ըստ չափման կետերի.

**2020թ. առաջին եռամսյակի չափումների արդյունքների համեմատական գրաֆիկական պատկերը**



**2019-2020թ. առաջին եռամսյակի չափումների արդյունքների համեմատական գրաֆիկական պատկերը**

**հետևյալն է**



Ինչպես երևում է 2019-2020թ. առաջին եռամսյակի համեմատական գրաֆիկից ավտոտրանսպորտային միջոցների ինտենսիվությունը

Կետ N°1 Կապանի ՃՇՇ-ի մոտ՝ նվազում

Կետ N°2 Մեղրու ՃՇՇ-ի ա/բ գործարանի մոտ՝ նվազում

Կետ N°3 Լոռու ՃՇՇ-ի մոտ՝ նվազում

Կետ N°4 Պուշկինի թունելի մոտ՝ նվազում

Կետ N°5 Դիլիջանի թունելի մոտ՝ նվազում

Հաշվետու եռամսյակում 5 մշտական տեղադրված հաշվիչներից իրականացվել է տվյալների հավաքագրում:

Կատարվել է հավաքագրված տվյալների ամփոփում, մուտքագրում համակարգիչ և համապատասխան վերլուծություն:

Բոլոր կատարված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

### **1.3 Աջակցություն պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վերականգնման ծրագրերի մշակմանը**

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից, պարբերաբար իրականացվել են հետևյալ աշխատանքները և միջոցառումները.

- տեխնիկական և մասնագիտական աջակցություն ոլորտի խորհրդատուներին,
- մասնակցություն միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինարներին, կոնֆերանսներին և քննարկումներին,
- իրականացվել է մասնագիտական աջակցություն «Լոկատոր» ՓԲԸ մասնագետներին:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

## **1.4 Ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում, տվյալների շտեմարանի լրացում և վարում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նախապատրաստական և պլանավորման աշխատանքներ, հավքագրված տվյալների մշակում, ինչպես նաև տվյալների շտեմարանի լրացում և վարում:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

## **1.5 Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում**

Հաշվետու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները և միջոցառումները.

1. Դատախազության հարցման կապակցությամբ տեղեկատվություն է ներկայացվել Մ-4 և Մ-14 ավտոճանապարհների խաչմերուկում տեղակայված տաղավարի կարգավիճակի վերաբերյալ:

2. Առաջարկություն է ներկայացվել՝

2.1. Տավուշի մարզի ավտոճանապարհների վիճակի մասին աշխատանքային խմբի կողմից հայտնաբերված թերությունների մասին ՀՀ Տավուշի մարզպետի գրության կապակցությամբ:

2.2. «Իմ Հայաստան» ծրագրի ղեկավարին զբոսաշրջության խթանման հետ կապված ցուցանակների տեղակայման թույլտվության կապակցությամբ:

2.3. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության ներկայացված ավտովթարների առաջացման պատճառների պարզաբանման կապակցությամբ:

3. Կարծիք է ներկայացվել՝

3.1. «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հարցմանը ցուցանակներ տեղադրման վերաբերյալ:

3.2. Շիրակի մարզի ավտոճանապարհների վիճակի կապակցությամբ Շիրակի մարզպետին ուղղված Շիրակի դատախազության միջնորդագրի կապակցությամբ:

4. Վարչական դատարանին պարզաբանում է տրվել Մ-4 ասվտոճանապարհի 80.5կմ տեղամասում 50կմ/ժ արագության սահմանափակման նշանի առկայության վերաբերյալ:

5. Մասնակցություն Եվրոպական ներդրումային բանկի մասնագետների կողմից ներկայացված Արարատի մարզի տարածքով անցնող ասվտոճանապարհներին՝ ճանապարհատրանսպորտային պատահարների կուտակման վայրերն ուսումնասիրելու և թերությունների վերացման ուղղությամբ կազմակերպված մրցույթի անցկացմանը:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

2. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ  
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԿԱՊԱԼԱՌՈՒ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ  
ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ



**2.1 Կարարված աշխատանքների ընդունման նպատակով միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում՝ հաջորդ փարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով**

Հաշվետրու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների ընթացիկ ձմեռային պահպանման, կապալառուների կողմից իրականացված աշխատանքների մասնագիտական հսկողություն հետևյալ մարզերում.

Մարզի անվանումը	Սպասարկվող ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը, կմ
	Ձմեռային
Արագածոտն	275.7
Արարատ	243.5
Արմավիր	214.8
Գեղարքունիք	386.4
Կոտայք	317.8
Լոռի	414.2
Շիրակ	270.3
Սյունիք	547.4
Վայոց Ձոր	239.0
Տավուշ	428.1
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>3336.9</b>

Ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածն է՝ նոյեմբերի 16-ից մինչև հաջորդ փարվա մարտի 31-ը:

Ձմեռային պահպանման ժամանակահատվածում կազմակերպվել է շուրջօրյա հերթապահություն ավտոճանապարհների անցանելիության վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

Հերթապահությունը իրականացվում է հետևյալ գրաֆիկով՝

- աշխատանքային օրերին՝ ժամը 18<sup>00</sup> մինչև հաջորդ օրվա 9<sup>00</sup>
- ոչ աշխատանքային և տոնական օրերին՝ շուրջօրյա:



Կատարվել է համապատասխան գրառումներ գրանցման մատյաններում, որի հիման վրա ընդունվել է կապալառու կազմակերպությունների կատարած ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները:

Ձմեռային պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2010թ. նոյեմբերի 4-ին հաստատված N 1419-Ն կարգի համաձայն:

Բացի վերը նշվածից, անհրաժեշտությունից ելնելով (սողանքներ, փլվածքներ, հեղեղումներ, բողոքներ և այլն) իրականացվել են լրացուցիչ ուսումնասիրություններ:

Բոլոր կատարված հսկողությունների և ուսումնասիրությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

**2.2 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով**

Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների պարբերաբար դիտարկում և գնահատում

Հաշվետու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների կապալառուների կողմից իրականացված միջոցառումների մասնագիտական հսկողություն, այդ թվում՝

➤ **Թունելներ**

- Պուշկինի թունել
- Դիլիջանի թունել
- Նալբանդի թունել:

➤ **Կամուրջներ**

- Արաքս գետի վրայի Մեղրիի կամուրջ,

- Հ-6 Աբովյան - Եղվարդ - Աշտարակ ավտոմոբիլային ճանապարհի Հրազդան գետի վրայի կամուրջ,
- Մ-1 Երևան - Գյումրի - Վրաստանի սահման ավտոմոբիլային ճանապարհի Քասախ գետի վրայի կամուրջ,
- Մ-3 Մարգարա - Վանաձոր - Տաշիր - Վրաստանի սահման ավտոմոբիլային ճանապարհի Ձորագետ գետի վրայի կամուրջ,
- Զերմուկ քաղաքի կամուրջ:

Պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի կողմից 2010թ. դեկտեմբերի 12-ի N 710-Ն հրամանով հաստատված ընդունման կարգի համաձայն:

➤ **Պարսպող համակարգերի պահպանում և վնասված հափվածների վերականգնում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող 715.364 կմ ընդհանուր երկարությամբ պարսպող համակարգերի պահպանման կապալառուների կողմից իրականացված աշխատանքների մասնագիտական հսկողություն:

Պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի կողմից 2011թ. փետրվարի 24-ի N 79-Ն հրամանով հաստատված ընդունման կարգի համաձայն:

Կատարվել է համապատասխան գրառումներ գրանցման մատյաններում, որի հիման վրա ընդունվել է կապալառու կազմակերպությունների կողմից կատարված պահպանման աշխատանքները:

➤ **Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների գծանշում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների գծանշման

աշխատանքների՝ 2229 կմ ընդհանուր երկարությամբ /461312.4մ²/, կապալառուների կողմից իրականացված միջոցառումների մասնագիտական հսկողություն:

Կատարվել է համապատասխան գրառումներ գրանցման մատյաններում, որի հիման վրա ընդունվել է կապալառու կազմակերպությունների կողմից կատարված պահպանման աշխատանքները:

Բոլոր կատարված հսկողությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

### **2.3 Ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների մշտադիտարկում, հսկողություն և գնահատում**

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել են 2 միջպետական նշանակության ավտոճանապարհների 28.192 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների միջին նորոգման թերությունների ակտեր:

Բոլոր կատարված հսկողությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

**3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ  
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ /ՆԱԽԱԳԾԱՅԻՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ,  
ԳՆՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ  
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ,  
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ/ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Հաշվետրու ժամանակահատվածում իրականացվել են ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին իրականացվող թվով 1 տրանսպորտային օբյեկտի հիմնանորոգման նախագծի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների տեխնիկական առաջադրանքի մշակում, նախագծի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների գնման հայտերի կազմում, թվով 5 օբյեկտների հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների ընդունում, 52 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների և տեխ. հսկողության ծառայությունների ձեռքբերման հայտերի կազմում:

Հաշվետրու ժամանակահատվածում ուսումնասիրվել են նաև ՀՀ մարզերից ստացված սուբվենցիայի ծրագրային հայտերը, տեխնիկական բնութագրերը և հայտերի գնահատման նպատակով ներկայացվել են մասնագիտական դիրքորոշում:

Բոլոր կատարված հսկողությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

**4. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ  
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ  
ԵՎ/ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ  
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐ  
ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են լաբորատորիայի աշխատակիցների հրահանգավորում՝ աշխատանքային անվտանգության կանոնների վերաբերյալ, լաբորատոր սարքավորումների տեխնիկական անսարքությունների վերացում և կարգաբերում, լաբորատորիայի գույքի գույքագրում:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են նաև տնօրինության կողմից տրված հանձնարարականները:

Իրականացվել են ՀՀ Արմավիրի, Լոռու և Շիրակի մարզերի համապատասխան ճանապարհների հատվածներում ուսումնասիրման նպատակով անհրաժեշտ աշխատանքներ:

Բացի վերոնշյալ աշխատանքներից տվյալ ժամանակահատվածում իրականացվել են՝ ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տնօրինությանն ուղղված գրության համապատասխան, «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք» ծրագրով Արարատի մարզի՝ Երևան – Արտաշատ և Արագածոտնի մարզի՝ Երևան – Աշտարակ ճանապարհահատվածներում որակի հսկողության գործառույթներ: Նշված ճանապարհահատվածներից լաբորատորիա են տեղափոխվել թվով 91 հանուկներ:

Բոլոր կատարված հսկողությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում: